

Evening Hour (Երեկոյեան Ժամ) Prayer

Օրհնեալ տէր, որ բնակեալդ ես ի բարձունս, եւ օրհնեալ են փառք
մեծութեան քո. որ հաստատեցեր զլուսաւորս ի բարձունս. ի յերկնից
լոյս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս: Արարեր զարեգակն լուսատու
սուրնջեան, զլուսինն եւ զաստեղս լուսատու գիշերոյ, եւ զլոյս
ճրագի. Դու ես լոյս գովելի, սուրբ եւ առաջին լոյսն. ի քէն փախնու
խաւարն. եւ զլոյս քո կենդանի, տէր, ծագեա ի սիրտս մեր: Եւ մեք
միաբան ասասցուք. օրհնեալ է անուն սուրբ փարաց քոց. եւ քեզ
երգեմք զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ սրբոյ, այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: